440
III · 3

[illegible] [illegible] [illegible]

[illegible] [illegible] [illegible]

Զմիւռնիայ. 1880. Յունիսի 16.

Լրագիրս ամեն ուրբաթ օրեր հրատարակի.
Տարեկան գինն է Փարիզի համար. 15 ֆր.
Տաճկաստանի, Աւստրիոյ, Անգղիոյ 18 »
Ռուսաստանի եւ Պարսկաստանի. 25 »
Ամերիկայի եւ Հնդկաստանի . . . 28 »

# ՓԱՐԻԶ

## ԼՐԱԳԻՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ

Ստորագրութիւնները տարեգլխէն սկսին:
Նամակ եւ գրութիւնք պէտք է ուղղին այս օրինակ հասցէիւ. A. Mourad,
rue Saint-Sulpice, 38, à Paris.
Չվճարեալ նամակները պիտի մերժուին:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. — Թ. 1 | 1860 | 6 ՅՈՒՆՎԱՐ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անկէց գրեթէ երբը տարի յառաջ ի Նիկոմիդիա հրատարակած *Հայրենասէր* անուն թերթերնիս, եռամեայ ընթացքէն յետոյ երբ դադրեցուցինք, երբէք զայն անգամ մի եւս շարունակելոյ միտք չէր. ինչպէս որ այն դադարման ակամայ լինելն եւ պատճառները մեր վերջին յայտարարութեան մէջ համառօտիւ բացատրած եմք: Հետեւաբար օրագրութիւնս շարունակելը մեզ միշտ փափաքելի լինելով՝ բարեպատեհ առթին անձկանօք սպասէինք նորա գործադրութեանը:

Ուրախ եմք, որ վերջապէս Ամենակարողին շնորհիւն եւ ազգասիրաց խրախուսանօքն այն ցանկալի առիթն ստացանք եւ ահա սկսիմք լրագիրնիս շարունակել ի Փարիզ, մայրաքաղաքիս անուամբը՝ զայն ՓԱՐԻԶ կոչելով:

Ներկայ հրատարակութեանս նպատակին վրայ հոս կրկին խօսելն աւելորդ կարծեմք, քանզի ի սկզբանէ անտի նպատակնիս մի եւ նոյն է: Ուստի բռնելիք ընթացքնուս վրայ համառօտ ծանօթութիւն մի տամք ընթերցողաց:

Ըստ որում մերազնեայք օրէ օր անխոնջ ջանիւք Եւրոպիոյ զովելի յառաջադիմութեան մասնակից լինել փութան, եւ անոր հետ ստէպ հաղորդակցութիւններ ունենալ սկսելով՝ առեւտուր հաստատելոյ ջանքեր եւ սկզբնաւորութիւններ ընեն. ուստի այսպիսի շարժման մէջ գտնուող ժողովուրդի մը համար, Եւրոպիոյ լուսաւորեալ քաղաքի մը, մանաւանդ Փարիզի մէջ, այնպիսի լրագրոյ մը հրատարակութիւնն օգտակար կրնայ լինել, որ աշխարհի քաղաքական ընթացքին վրայ համառօտ տեղեկութիւններ տալէն ի զատ՝ առեւտրական այն լրերն ալ պարունակէ, որ հայոց վաճառականութեան վերաբերելով շահաւէտ են:

Ահա այսպէս խորհրդածելով՝ սոյն միջոցն ընտրեցինք մեր նպատակին դիմելոյ համար: Ուստի ամեն շաբթու մայրաքաղաքիս օրագիրներէն՝ մերազնեայց օգտակար եւ հետաքրքրութեանն արժանաւոր լրոց համառօտ քաղուած մի պիտի ընեմք:

Սակայն առեւտրական մասին մէջ ամեն շաբթուան փոխանակութեան (գամպիոյ) գիները, նոյնպէս գլխաւոր ապրանաց արժողութիւնը, ծախուածը եւ մուտքն ու ելքը ծանուցանելէն յետոյ, պիտի ջանամք մանաւանդ մետաքսի, խօզակի եւ անոր սերմին առեւտրոյն եւ հունձին վիճակին վրայ հնար եղածին չափ ընդարձակ տեղեկութիւն տալ:

Առանցմէ զատ պիտի հրատարակեմք նաեւ ազգային տեղեկութիւնք, բանասիրական եւ բարոյական վէպեր ընտիր հեղինակաց գրչէ ելած, ու այլեւայլ մանր լրեր, հետաքըրքրական եւ զուարճալի դէպքեր:

Ուստի եթէ մեր նպատակին յարմար գրութիւնք եւ տեղեկութիւնք խրկուին մեզ, պիտի ընդունիմք եւ արժան դատվածները պիտի հրատարակեմք: Սակայն կրօնական խռովայոյզ խնդիրներու վրայ գրուածները եւ զզուելի վիճաբանութիւնները միշտ պիտի մերժուին:

Լրագիրս հնար եղածին չափ անյապաղ բաժանորդաց հասցնելոյ համար, հրատարակման օրերն ուրբաթ ընել որոշեցինք. եւ ահա սկսիմք ըստ նոր տումարի նոր տարւոյս առաջին ուրբաթ օրէն: Մանաւանդ հոգ տարինք նաեւ գնոյն չափաւորութեանը մասին, եւ տարեկանը Փարիզի համար 15 ֆրանք սահմանեցինք: Անկէց ի զատ՝ փափաքելով որ հայաբնակ գեղերու ամենաաղքատիկ դպրոցներն ալ գոնէ լրագիր մի կարդալէ զուրկ չմնան, ուստի այնպիսեաց համար տասն օրինակ յատկացուցած եմք ձրի տալ. որոնք ուզուած ժամանակն անմիջապէս պիտի յղեմք, միայն թէ նամբուն ծախքն իրենք հատուցանեն:

Արդ՝ ինչպէս որ ամեն գործ, եւս առաւել սկզբնաւորութեան ժամա-

նակը, անհամար թերութիւններ ունի. նոյնպէս մեր այս աշխատութեան մէջ ալ անշուշտ շատ թերութիւններ պիտի տեսնուին. մանաւանդ որ այս երկրորդ ձեռնարկութիւնիս ալ առաջնոյն պէս մեր կարողութենէն շատ վեր է : Բայց ամենադժուար գործերն անգամ անթուլ ջանիւք ի գլուխ ելնելուն ստուգութեանը համոզուած լինելով' առանց այսպիսի գործի մը մեր անկարողութեանը նայելոյ ձեռք զարնեմք անոր, ապաւինելով ընթերցողաց ներողամտութեանը. զորս նոր այժմէն հայցելնուս յետոյ, ծանուցանեմք նաեւ' որ եթէ նշմարած թերութիւններնին մեզ ազդ առնել հաճին' չպիտի արհամարհեմք, այլ մեր չտեսած թերութեանցը նոցա դրդմամբը վերհասու լինելով պիտի փութամք ուղղել. որով գործերնիս օրէ օր զարգացընեմք, եւ եթէ հնար է, եւրոպական լրագրոց գոնէ յետինին կարգը դասելոյ կարողանալով' ծառայութիւննիս ըստ արժանւոյն կատարած լինիմք, որ մերմիմիայն բաղձանքն է :

---

Գրեթէ երկու շաբաթէ ի վեր լրագրոց խօսակցութեանց եւ քննադատութեանց նիւթ եղած է *Պապ եւ Դեսպանաժողով* ըսված Տետրակը: Ոմանք անկէ հետեւած տարաձայնութիւններէն մեծ դժուարութիւններ ծագելոյ երկիւղ կրեն: Իբր թէ Լոնտոնէն գրուած նամակի մը խօսքին նայելով, այն Տետրակին հրատարակման հետեւեալ օրը' Պապին պատուիրակը Գեր. Տաքքոնի, Վալեվսքի կոմսին երթալով' եռանդմամբ ստիպեր է եղեր թէ' այն Տետրակը պաշտօնական կերպիւ ուրացուի *Մօնիթէօրի* միջոցաւ: Վալեվսքի կոմսն այս խնդիրը մերժելուն' Գեր. Տաքքոնի, մէկ կողմանէ, կոմսին յայտներ է որ այն Տետրակն արգելք պիտի լինի Պապին երեսփոխաններուն յառաջիկայ դեսպանաժողովին ներկայանալը. եւ միւս կողմանէ, հեռագրով Անթօնէլլի կառտինալին պատուիրեր է եղեր, որ Հռոմէն նամբայ ելնելն ուշացընէ: Նոյն ժամանակը Մէթէռնիխ իշխանը եւ Անթօնինի մարգիզը Վալեվսքի կոմսին յայտներ են, թէ իրենց կառավարութիւններն տհաճ են տետրակին պատճառած տարաձայնութեանցը վերայ, եւ թէ պապին երեսփոխանաց դեսպանաժողովը մտնելէն հրաժարելը' կարելի է արգելք լինի նաեւ Աւստրիոյ եւ Նափոլիի երեսփոխանաց ներկայանալնոյն : Դարձեալ ասեն թէ, պապին երեսփոխանները դեսպանաժողովին մէջ չպիտի մտնեն, եթէ Գաղիա յառաջագոյն չխոստանայ պապին այժմեան իշխանութիւնն անխախտ մնալոյն պաշտպանութիւն ընել : Եւ յաւելցընեն թէ Անթօնէլլի կառտինալը Գաղիոյ դեսպանին ծանուցեր է, որ սուրբ աթոռոյն երեսփոխանները' դեսպանաժողովէն ա՛յն ժամանակ ետ պիտի քաշուին, երբ Հռովմայ քահանայապետին այժմեան կարողութիւնը քննութեան դրուի. ուստի խնդրեր է որ իրենց խոստացվի թէ ժողովքը այս կարողութիւնն ամեն վնասներէ ազատ պահել պիտի զգուշանայ: Եւ թէ այս պայմանով միայն պիտի հաճին իրենց հետ նաեւ Աւստրիոյ եւ Նաբօլիի կառավարութիւններն բանախօսութեան մէջ մտնել : Ահա այս եւ այսպիսի տարաձայնութիւններէն հետեւի ոմանց երկիւղը :

Իսկ աւելի խոհական եւ քաղաքագէտ մասը' թէ եւ այս դժուարութիւններն բոլորովին չարհամարհեր, բայց չափազանց երկիւղի ալ արժան չդատեր : Ինչպէս *Սիէքլ* օրագիրը *Պապ եւ Դեսպանաժողով* Տետրին դէմ Տիւբանլու եպիսկոպոսին հրատարակած սպառնալից գրութիւնը քննած ժամանակն ասէ թէ,

« Այսպիսի ամբարտաւան խօսքերը'
« իրեն ուղղած անձինքը ոչ թէ միայն չեն
« վրդովեր, այլ եւ կարելի է խնտացնեն
« ալ. քանզի այդ խօսքերը ծաղրալի
« կնիքով մը դրօշմեալ երեւին մեզ : Ա՛ղէ,
« Տէր եպիսկոպոսք, ձեր դարագլուխը յի-
« շեցէք, դուք մոռցեր էք որ լի բովանդակ
« իննետասներորդ դարուն մէջն էք, եւ
« թէ լուսագոյն պապականներն լուսա-
« ւորեալ են այժմ եւ երբէք չեն երեւակայեր
« ձեր խաչակրաց կարգին մէջ մտնելով
« ձեզ հետեւել : »

Ահա այսպէս ոմանք իրաց այժմեան վիճակէն ձախող ելք գուշակելով խռովին, եւ ոմանք եղած սպառնալեաց գործադրութիւնն աննար համարելով անփոյթ լինին: Իսկ թէ ո՞վ իրաւունք պիտի ունենայ, զայն ապագայն պիտի յայտնէ :

## ՊԱՊԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Երկու շաբաթ առաջ *Պապն ու Դեսպանաժողովն* անուն Տետր մի ելաւ, որ երկու տարի առաջ *Նափոլէոն Գ. եւ Անգղիայ*, հուսկ յետոյ *Նափոլէոն Գ. եւ Իտալիայ* անուն Տետրերուն հեղինակի (որ եւ Ֆռանսայի ամենէն բարձրաստիճան անձի) գրչէն ելած կարծուի ընդհանրապէս :

Այս Տետրն որ Պապին հոգեւոր եւ մարմնաւոր իշխանութեանց վրայ նուրբ դատքննութիւն ընելէն յետոյ, երկուքը միասին վարվելուն աններութիւնը ցոյց տայ, եւ պատկառանօք փափաքի աշխարհական իշխանութենէն ազատել կամ անոր վրայէն քրիստոնէական պաշտօնի հակառակ ծանրութիւն մի թեթեւցնել. այս Տետրն ըսինք, մեծ ազդեցութիւն տուաւ բոլոր Եւրոպայի:

Անշուշտ, յունվար 28ին, Իտալիայի խնդրոյն համար լինելիք Դեսպանաժողովին իբրեւ խորհրդատու եւ մանաւորապէս պապական իշխանութեանց վրայ լինելիք խնդրոյն իբրեւ առաջնորդ գրված ու ժողովրդոց առջեւը ձգված է այս Տետրը, իմանալոյ համար թէ ինչ կերպիւ պիտի տրամաբանեն կամ դատեն զայն :

Դիտելոյ արժան երկու հակառակ կարծիք տեսնըվեցաւ այս Տետրին վրայ, երկուքն ալ դժգոհութենէն առաջ եկած. Պապին իշխանութիւնը պաշտպանողներն սասանեցան այս Տետրը կարդալով ու կարծեցին թէ' անոր հոգեւոր իշխանութիւնն ալ վտանգի մէջ պիտի իյնայ այս սկզբունքով. նոյնպէս եւ պապականութեան անհաշտ թշնամիք յուսահատեցան' վախնալով թէ անոր մարմնաւոր իշխանութիւնը բառնալով իրեն հոգեւոր իշխանութիւնը անպատճառ պիտի զօրանայ եւ անհետանալոյ վտանգէն բոլորովին պիտի ազատի : Բայց հեղինակին միտքը, այս հակառակ կարծեաց երկուքին ալ դէմ, նոր սկզբունք մի հաստատել է. եւ ահա իր խօսքերը.

« Պապին աշխարհական կառավարութիւնը ատելով' բոլորովին անոր անկմանը փափաքող, նոյնպէս եւ աշխարհական կառավարութիւնն ալ հաւատոյ մասն համարելով' ամենեւին դպել չուզողներուն մէջ տեղ անմերժելի սկզբունք մի կայ, որ ժողովրդոց իրաւանց ու կրօնից օգտին համեմատ է » :

Հեղինակին միտքը' Պապին հոգեւոր իրաւունքն ու ժողովրդին արդար պահանջմունքը պաշտպանելով երկու' հակառակ կարծեաց, այսինքն, պապականութեան սաստիկ թշնամեաց եւ չափազանց պաշտպանողաց տեղի չտալ է, որով եւ հռոմէական կրօնքը եւ իտալական ազատութիւնը վտանգէն ազատել : Պապին հոգեւոր

